

**«2021 թվականի նոյեմբերի 18-ի Հայաստանի
Հանրապետության կառավարության N 1902-Լ
որոշման մեջ փոփոխություններ կատարելու
մասին» Կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2022 թվականի N ____ Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1902-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի
նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության
2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը
հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում)
հաստատված 1-ին Հավելվածի «Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի.
 - 10-րդ կետի «Ժամկետ» սյունակում «2022 թ. հունիսի 1-ին տասնօրյակ»
բառերը փոխարինել «2022 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ» բառերով,
 - 22-րդ կետի «Ժամկետ» սյունակում «2022թ. ապրիլի 1-ին տասնօրյակ»
բառերը փոխարինել «2022 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2022 թ.

Երևան